

ԱՌՎԱՆԻՑ ՈՍՏԱՆ-Ի-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱԾՈՅ

Ա. Մ. ՎԱՐԴԱՅԵԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող

Աղվանքի գավառաբաժանան, հատկապես արքայանիստ Ոստան-ի-Մարզպան գավառի տեղադրության հարցը միշտ էլ գտնվել է ուսումնասիրողների սեռուն ուշադրության կենտրոնում:

«Աշխարհացոյց»-ի ձեռագրերում Ոստան-ի-Մարզպան գավառը հանդիպում է տարբեր անվանումներով՝ Ոստան ի մարզպան, Ոստան, Ոստանի-մարձ¹ և այլն: Սակայն գավառի անվան տարբերեցումը ցույց է տվել, որ ճիշտ անվանումն է Ոստան-ի-Մարզպան²: Ոստան-ի-Մարզպան գավառի տեղադրության ճշգրտման հարցում առաջնային նշանակություն ունի այնպիսի վստահելի սկզբնաղբյուր, ինչպիսին է VIIդ. հայկական «Աշխարհացոյց»-ը³: «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության տեքստում Աղվանքի մասին նշված է. «Ի՞՞ Աղրանիա, այս ինքն է Աղուանք, յելից կալով Կրաց առ Երի Սարմատիրոյ առ Կաւկասաւ մինչև ցկարից ծովն և շայոց սահմանն առ Կուր գետով: Ունի դաշտս արգաւանդս, քաղաքս և բերդս և գեղարադաքս, գետս բազումս, եղեգունս հզօրս: Եւ գաւառը այսոքի Եխնի, Բեխ, Թամրէճան, Շաքը, Ոստանի Մարձպան, Դաշտի Բաւասական և այլ գաւառս զորս ի Յայոց համեալ է, Շիկաշն, Գաղողման, Կողթ, Զաւէ, և այլ քսան գաւառ մինչև ցիսար-նումն Երասխայի՝ Կուր գետ »⁴: Ս. Երեմյանը Ոստան-ի-Մարզպան գավառը տեղադրում է Խորենաց և Յամբասի գավառների մեջտեղում, համապատասխանաբար՝ Սամի և Կեսիոս գետերի արանքում⁵.

¹ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Սատենադարան, այսուհետև՝ ՍՄ, ձեռ. N 696, էջ 93^թ, ձեռ. 2019, էջ 292^թ, ձեռ. N 3160, էջ 283^ա:

² Տես Ա. Վարդայան, Աղվանքի պատմապահագրական քննություն, Երևան, 2013, էջ 104-105: Ոստան նշանակում է մայրաքաղաք, քաղաքամայր, նախազահ քաղաք (տես Ա. Սուրիշասյան Յայոց լեզվի հոնանիշների բառարան, Երևան, 1967, էջ 519):

³ Կ. Պատկան, Արմանակ Գեոգրաֆիա VII եւ ուսումնական պատմություն Մասնաւոր Աշխարհացոյց (Կայուն պատմություն Աշխարհացոյց կամաց առաջնային պատմություն Աշխարհացոյց), 1877, էջ 40-41: «Աշխարհացոյց» եղարու, էջ 17, Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Ա. Գ. Արքահայանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 290-291: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության տեքստում ընդհանուսակն Ոստան-ի-Մարզպան գաւառը չի հիշառավակում (Տես «Աշխարհացոյց» Մովսեսի Խորենացոյ յաւելուածնիք մահմեաց (այսուհետև՝ «Աշխարհացոյց»), Վենետիկ, 1881, էջ 28-29):

⁴ Կ. Պատկան, նշվ. աշխ., էջ 40-41, «Աշխարհացոյց» է դարու, էջ 17:

⁵ Ս. Երեմյան, Յամբասազ քսան «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 75 և կից քարտեզը թ7:

Բ. Հարությունյանը գավառը նախ տեղադրում է Խողմազ և Հարանդ գավառների միջև՝ հետագայում՝ ավելի մեծ տարածություն է հատկացնում Ոստան-ի-Մարզպան գավառին, այն ներառելով Շաքե և Հարանդ գավառների արանքում՝ համապատասխանաբար Տուրիան-չայ, կամ Սարդորոնես, գետերի արևելյան ջրբաժանը, իսկ արևմուտքում՝ մինչև Դեգառու կամ Ագրի-չայ գետերի արևելյան ջրբաժանը⁷: Յ. Խորիկյանը, Վերջերս լույս տեսած իր հոդվածում, նախ Ոստան-ի-Մարզպան գավառն ուսումնասիրում է որպես Կապաղակի տարածք, չմանրանասնելով գավառի սահմանները, նշելով. «Կապաղակը՝ որպես գավառ և եպիսկոպոսություն, հիշատակում է նաև «Պատմութիւն Աղուանից»-ը: Կապաղակը՝ որպես Աղվանից թագավորության մայրաքաղաք, «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրություններում և Ղևոնդի մոտ հանդես է գալիս Ոստան անվանումով⁸:» Ինչպես վկայում են սկզբնաղբյուրները՝⁹ Աղվանքը թե՛ թագավորության, և թե՛ մարզպանության շրջանում Կապաղակ անվանք գավառ չի ունեցել, եթե այդպիսի անվանումով գավառ լիներ, ապա պատմիները կոչենին Կապաղակ, այլ ոչ թե Ոստան: Կապաղակը եղել է Աղվանից թագավորության մայրաքաղաքը:

Գուցե հետագա դարերում՝ Պարսկաստանի տիրապետության ժամանակահատվածում, մասնավորապես շահ Խսնայիլի արշավանքի հետևանքով ավերվեց քաղաքը և Կապաղակը կորցրեց իր նշանակությունը որպես վարչական, առևտրական ու մշակույթային կենտրոն և բնակչությունը տեղափոխվեց Չուխուր Կարալա գյուղ, նրա անվանումը տարածվեց նախկին Ոստան-ի-Մարզպան գավառի տարածքի վրա: Ասվածը հիմնավորելու համար նշենք, որ 19-րդ դարի հետազոտող Մակար Սարիսուտարյանը ուսումնասիրելով Աղվանքի գավառների տեղադրությունը, վարչական նկարագիրը, բնակլիմայական պայմանները և մի շարք այլ հարակից հարցեր, իր աշխատանքում՝ Աղվանքի գավառների շարքում, նշում է Կապաղակ անվանք գավառ՝¹⁰ նախկին Ոստան-ի-Մարզպան գավառի տարածքում:

«Աշխարհացոյց»-ի ձեռագրերում առկա խաթարումները, որոնցում իրենց մեղքի բաժինն ունեն ընդօրինակողները, ուսումնասիրողներին թույլ չեն

⁶ Բ. Հարությունյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Երևան, 2001:

⁷ Բ. Հարությունյան, Այսպես կոչված Աղվանքի սահմանների, տարածքի և գավառաբաժաննան շուրջ՝ «Քեմ» համահայկական հանդես, 2012, թիվ 2, էջ 71:

⁸ Յ. Խորիկյան, Աղվանից մարզպանության վարչական բաժանումներն ըստ «Աշխարհացոյց»-ի. - «Սերծավկը և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXVIII Երևան, 2011, էջ 76:

⁹ Տե՛ս «Աշխարհացոյց» է դարձու, էջ 17, Պատմութիւն Դեւոնդեայ մեջի վարդապետի հայոց, Ս.Պետերբուրգ, 1887, էջ 132:

¹⁰ Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացից Արցախ, Երևան, 1999, էջ 61,124 :

տվել Աղվանքի գավառների, մասնավորապես՝ Ոստան-ի-Մարզպան գավառի տեղադրությանը տալ սպառիչ պատասխան: Մի շարք ձեռագրերում գավառը հիշատակվում է Գետառուի կողքին,¹¹ մեկ այլ տեղում է՝ Շաբէ գավառի հարևանությանը¹²:

Բայց, ուսումնասիրողների կողմից ապացուցված է այն հանգանքը, որ այս երկու գավառների՝ հատկապես Շաբէի և թագավորանիստ գավառի միջև ներկայացված քարտեզում Բ. Դարությունյանը, ինչպես վերը նշել ենք, ի Մարզպան գավառների մեջտեղից դուրս է թողնում Խողմազ գավառը՝ վերջինիս տարածքը մտցնելով Ոստան-ի-Մարզպան գավառի մեջ¹³:

«Աշխարհացոյց»-ի աշխարհաբար թարգմանությունում Գեղավու և Յամբասի գավառները հիշատակվում են Յողմազ գավառի հարևանությամբ. «Իսկ դեահ արևելք գտնվում են Յողմազ, Գեղավու, Յամբասի գավառները, ապա՝ Ոստան-ի-Մարզպան գավառը¹⁴:

Ստացվում է, որ թվարկված այս երեք գավառներից հետո սկսվում է Ոստան-ի-Մարզպան գավառը: Բարեբախտաբար, «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ պահպանվել է հետևյալ հատվածը. «Քավաղակ քաղաք մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սերոց դէպ ի հարաւոյ»¹⁵:

Վերը նշված հաղորդումից ելենլով Վստահորեն կարելի է ասել, որ Աղվանքի մայրաքաղաք Կապաղակը գտնվել է Ոստան-ի-Մարզպան գավառում՝ Սերոց գետի ափին: Աներկրա է, որ այն գտնվել է ոչ թե Վերոհիշյալ երեք գավառներից արևելք, այլ Յողմազ գավառի հարևանությամբ¹⁶:

Ինչ վերաբերում է Ոստան-ի-Մարզպան գավառի արևելյան սահմանին, ապա կարծում ենք, որ գավառը սահմանակից է Գեղավու և Յամբասի գավառներին¹⁷: Ս. Երեմյանն իր հեղինակած քարտեզում Ոստան-ի-Մարզպան գավառի արևելյան սահմանի ամբողջ Երկարությամբ տեղադրում է Յամբասի գավառը¹⁸: Կարծում ենք, որ Զաշանավոր հայագետը վերոհիշյալ Եզրահանգնան է եկել այն պատճառով, որ «Աշխարհացոյց»-ում Յամբաս ի գավառը հանդես է գալիս Ոստան-ի-Մարզպան գավառի հարևանությամբ: Սակայն, չի

¹¹ ՍՄ, ձեռ. N 1898, էջ 268^թ, ձեռ. N 2370, էջ 256^ա, ձեռ. N 3502, 15 214^թ:

¹² ՍՄ, ձեռ. N 5120, էջ 97^ա:

¹³ Բ. Դարությունյան, Այսպես կոչված Աղվանք սահմանների, տարածքի և գավառաբաժանման շուրջ, էջ 70:

¹⁴ Անանիա Շիրակացի, Սատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Արդահամանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 290:

¹⁵ «Աշխարհացոյց», էջ 29:

¹⁶ Տես Ս. Երեմյան, Յայստանը ըստ «Աշխարհացոյց»-ի և կից քարտեզը, թ 7: Ա. Կարդանյան, նշվ. աշխ., էջ 114, 135:

¹⁷ Սամբռաման տես Ա. Կարդանյան, նշվ. աշխ., էջ 120-121, 135:

¹⁸ Ս. Երեմյան, նշվ. աշխ. և կից քարտեզ:

նշանակում, որ Համբասի գավառը պետք է ներառել Կովկասյան լեռների փեշերին: Գավառը տարածված է եղել ավելի հարավ և սահմանի մի փոքր մասով է հարևան Ոստան-ի-Մարզպան գավառին ու Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի հետ սահման չի ունեցել: Մեր կարծիքով Համբասի գավառը պետք է տեղադրել ավելի հարավ՝ Բազկան գավառի հյուսիսային սահմաններում, որը Ս. Երեմյանի կազմած քարտեզում նշված է Քեջերի տարածք¹⁹, իսկ Բ. Հարությունյանի հեղինակած քարտեզում Քաղաց դաշտի²⁰: Այսպիսով՝ գալիս ենք այն եզրահանգնան, որ Ոստան-ի-Մարզպան գավառն արևելքում, ինչպես վերը նշել ենք սահմանակից է ոչ միայն Համբասի այլ Գեղավոր գավառներին: Դա հաստատվում է նաև Ս. Բարիտուղարյանցի հետևյալ հաղորդումով. «Գեղավոր- (Ա. Վ.) գավառն ընկած է Կոկիսոն (Կեսիոս - Ա. Վ.) եւ Օբազան գետակների եւ Կովկասեան մեծ լեռնաշղթայի զագարնագծի եւ Բօց-Դաղի հիւսիսային լեռնաշղթայի լանջերի մեջ...»²¹: Ելմելով այս հաղորդումից՝ կարելի է ասել, որ Գեղավոր գավառի սահմանը հասել է Կոկիսոն գետը և գավառը սահման է ունեցել Ոստան-ի-Մարզպան գավառի հետ: Եվ այդ պատճառով էլ Համբասի գավառը տեղափոխվում է դեպի հարավ, սակայն մնալով Ոստան-ի-Մարզպան գավառի հարավ-արևելյան, հարևան գավառներից մեզը: Այսպիսով՝ Ոստան-ի-Մարզպան գավառը հյուսիսից սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային, հարավից՝ Քաղաց դաշտ և Բազկան գավառներին, հյուսիս-արևելքից՝ Գեղավոր, հարավ-արևելքից՝ Համբասի, իսկ արևմուտքից՝ Հողմազ գավառներին:

Բամալի բառեր – Ոստան, Աշխարհացոյց, Մարզպան, Համբաս, Գեղավոր, Գավառ, Կապաղակ

¹⁹ Ս. Երեմյան, նշվ. աշխ. և կից քարտեզը:

²⁰ Բ. Հարությունյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»ի և այլ աղբյուրների, քարտեզ: Բ. Հարությունյանն իր հեղինակած քարտեզներում չի հիշատակում Համբասի գավառը:

²¹ Ս. Բարիտուղարեանց, նշվ. աշխ., էջ 124:

MARSPAN PROVINCE OF AGHVAR METROPOLIAN

A. M. VARDANYAN

PhD of Historical Sciences,

Researcher of the History Institute of the NAS

The location of Marspan province of metropolitan was always at the center of attention for investigations. The manuscripts and the publications of 'Ashkharatsuyts' /7th c./ is the main material for noticing the location the province. According to above mentioned material Marspan province bordering by Caucasion mountains in the North; by Karts fields and Bazkan province in the South; in the North-East by Geghaka; by Hamzasy province in the South-East and at last by Haghmaz in the West.

КАНТОН ВОСТАН - МАРЗПАН АГВАНКА

A. M. ВАРДАНЯН

*Кандидат исторических наук,
научный сотрудник института науки*

Вопрос разделения уездов (кантона) Агванка, особенно местонахождение королевского кантона Востан-Марзпан, всегда был в центре внимания исследователей. Исследуя рукописи "Ашхарацуца" VII века и существующую литературу, мы находим, что кантона Востан-Марзпан имел большую территорию и в нем находилась столица Капагак. С севера кантон Востан-Марзпан граничит с горными хребтами Кавказа, с юга – с долиной Кагац и кантом Базкан, с северо – востока – с Гекаву, с юга - востока - с кантами Амбаси и Огмаз.